ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 119/48-L «26» 06 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 6-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնները համալրելու նպատակով 2026թ. սեպտեմբերի 10-16-ը ընկած ժամանակահատվածում՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

Հ/Հ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԱՄԲԻՈՆ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ
1.	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ	Ֆինանսահաշվային ամբիոն	1
2.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոն	1
3.	Աստվածաբանության ֆակուլտետ	Կրոնագիտության ամբիոն	1
4.	Աստվածաբանության ֆակուլտետ	Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոն	1
5.	Իրավագիտության ֆակուլտետ	Քաղաքացիական դատավարության ամբիոն	1

2. ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին և կրթական ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ժ/Կ՝ Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ